Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունիսի 26-ից 29-ը Բելգիայի Թագավորություն (ք.Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք.Բրյուսել, հունիսի 26-ից 29-ը

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային համագործակցության խորհրդի 133-րդ և 134-րդ նստաշրջաններին, ինչպես նաև նստաշրջանների շրջանակներում տեղի ունեցող մի շարք ընտրություններին:

6. Քննարկված թեմաները

Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային համագործակցության խորհրդի 133-րդ և 134-րդ նստաշրջանների ընթացքում անդրադարձ է կատարվել ՀՄԿ կոմիտեների, ենթակոմիտեների և

հանձնաժողովների նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքներին, հաստատվել են 129-րդ/130-րդ, 131-րդ և 132-րդ նստաշրջանների արձանագրությունները, քննարկվել են Քաղաքականության հանձնաժողովի 80-րդ և 81-րդ նստաշրջաններում բարձրացված հարցերը: Հնչեցին ելույթներ կարողությունների զարգացման, սակագների և առևտրային գործերի, համապատասխանեցման և դյուրացման հարցերի, ֆինանսական խնդիրների վերաբերյալ: Ներկայացվեցին հաշվետվություններ տնտեսական մրցունակության փաթեթի, համապատասխանության և իրավակիրարկման փաթեթի, եկամուտների փաթեթի առաջընթացի վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Բացի վերոնշյալից, 133-րդ և 134-րդ նստաշրջանների ընթացքում անցկացվեցին համապատասխանեցման և դյուրացման, ինչպես նաև կարողությունների զարգացման դիրեկտորատների տնօրենների պաշտոնում նշանակվելու համար ընտրություններ: Հնչեցին ելույթներ տվյալ պաշտոններում առաջադրված թեկնածուների կողմից:

Կարողությունների զարգացման հարցերով դիրեկտորատի տնօրեն ընտվեց Կորեայի Հանրապետության ներկայացուցիչը

Համապատասխանեցման և դյուրացման դիրեկտորատի տնօրեն նախագահ ընտվեց Հնդկաստանի Հանրապետության ներկայացուցիչը:

ՀՄԿ խորհրդի նախագահող է ընտրվել Ուգանդայի ներկայացուցիչը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հայաստանը վերընտրվել է ՀՄԿ աուդիտի կոմիտեի անդամ: ՀՄԿ 182 անդամներից Աուդիտի կոմիտեում ներկայացված է 12-ը: Հայաստանի մաքսային

ծառայությունը Նիդերլանդների մաքսային ծառայության հետ միասին Աուդիտի կոմիտեում ներկայացնելու են ՀՄԿ Եվրոպական տարածաշրջանը:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ՀՄԿ գլխավոր քարտուղար պարոն Կունիո Միկուրիայի հետ, որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել վերջինիս այցը Հայաստան՝ մասնակցելու հոկտեմբերի 6-9-ը Հայաստանում կայանալիք տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովին:

Տեղի են ունեցել նաև երկկողմանի հանդիպումներ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի, Հնդկաստանի, Զամբիայի, ինչպես նաև Կորեայի մաքսային ծառայությունների պատվիրակությունների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:. Կորեայի մաքսային ծառայության պատվիրակության հետ համաձայնություն է ձեռք բերվել կազմակերպել ՀՀ Պեկ աշխատակիցների ճանաչողական այց Կորեայի մաքսային վարչարարություն՝ ծանոթանալու տեղի մաքսային լաբորատորիաներին, մեկ պատուհանին, ինչպես նաև տեղեկատվական այլ համակարգերին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության հաջորդ տարեկան նստաշրջանը տեղի կունենա 2020թ. հունիսին Բրյուսելում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

03.07.2019թ.